

# ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում քննություն են անցկացրել, որը գնահատվել է 10 բալանոց համակարգով: Դպրոցականների աշխատանքները գնահատվել են, և տեսուչին ներկայացվել են գնահատականները տոկոսներով, այսինքն, թե քանի տոկոսն է 10 ստացել, քանիսը 9-ը և այդպես շարունակ: Չարմանալիորեն բոլոր տոկոսներն ամբողջ թվեր են:

«Սպասեք,- ասաց տեսուչը, նայելով թվերը,- բայց քանի՞ հոգի են մասնակցել քննությանը»:

Այդ հարցի պատասխանն, իհարկե, միարժեք չէ: Պահանջվում է գրել ծրագիր, որը պարզում է, թե առնվազն քանի դպրոցական է մասնակցել քննությանը, որ արդյունքում այդպիսի տոկոսներ են ստացվել:

## **Մուտքային տվյալներ**

Տրված են իրարից մեկական բացատանիշով անջատված 11 ոչ բացասական ամբողջ թվեր, որոնց գումարը 100 է: Առաջին թիվը ցույց է տալիս, թե քանի տոկոսն է ստացել 10, երկրորդը՝ 9, վերջին թիվը ցույց է տալիս, թե քանի տոկոսն է ստացել 0:

## **Ելքային տվյալներ**

Պետք է արտածել մեկ թիվ՝ քննությանը մասնակցած դպրոցականների մինիմալ քանակը:

## **Օրինակներ**

<b>Մուտք</b>	<b>Ելք</b>
10 15 20 20 30 5 0 0 0 0 0	20

<b>Մուտք</b>	<b>Ելք</b>
10 10 10 10 10 10 10 10 10 10 0 10	